

- բ) Բարոյական կամ նկարագրի առաքինություններու մէկ մասը, ինչպէս օրինակ՝ բարեկամութիւն, սիրալիրութիւն, ներողամտութիւն, եւայլն ... *այլասիրութիւն* (Altruism) մը կը ցուցաբերէ, որ կարելի է միայն այն պարագային, երբ անհատը ընդունի որ ընկերա-հասարակութեան կեանքը նաեւ իր բարօրութեան համար նպաստաւոր է.
- գ) Արիստոտելի համաձայն, բարոյական կամ նկարագրի առաքինությունները կարելի է ձեռք բերել դաստիարակութեան ու կրթութեան ճամբով. բաներ, որոնք պետական օրէնքներու հետ կապ ունին: Պետական լաւ օրէնքները կը նպաստեն դաստիարակութեան ու կրթութեան գործընթացին. եւ
- դ) Պետութիւնը ոչ միայն պետք է պաշտպանէ իր երկրի բնակիչները, այլ պետք է անոնց պարգեւէ *լաւ կեանքի* մը բոլոր կարելիութիւնները: Իսկ ընկերային բնութիւն ունեցող մարդ Էակը, իր կեանքը կրնայ արժեւորել պետութեան մը ընկերային-հասարակական ոլորտէն ներս:



Քննադատութիւն

Առաքինութեան բարոյագիտութիւնը, հակառակ իր կարգ մը առաւելություններուն ու դրական յատկանիշներուն, ենթարկուած է որոշ քննադատություններու, գլխաւորաբար բարոյական արժեւորման բազմաթիւ դժուարություններուն պատճառով:

Ինչպէս յիշուեցաւ, առաքինութեան բարոյագիտութիւնը, բարոյական արժեւորման որպէս ելակէտ կը նկատէ ո՛չ մարդկային վարմունքները եւ ոչ այդ վարմունքներու հետեւանքները, այլ այդ վարմունքներու հեղինակ՝ անհատի կամ ենթակայի բարոյական *բարի* կամ *առաքինի* նկարագիրը: Այլ խօսքով այստեղ խնդրոյ առարկայ է մարդկային ընդհանուր Էակ մը, նկարագրի որոշ կերտուածքով: Սակայն մարդու այս Էականութիւնը (Essentialism), արդիական մեր ժամանակներուն, կարելի չէ պարզապէս պատկերացնել, որովհետեւ արդի մարդը կը յատկանշուի իր անհատական խղճով, անձնական ինքնավարութեամբ եւ իւրայատուկ կենցաղով:

Մարդոց համար, լաւ կեանքը կամ բարօրութիւնը, իր բաւական խրթին եւ անկարգ դրութեամբ, կը բախի ընդհանրացման դժուարություններուն, որովհետեւ տարբեր ընկերություններու մէջ ապրող անհատներ, անպայման լաւ կեանքի կամ բարօրութեան նոյն պատկերացումները չունին եւ չեն կրնար ունենալ: Այս պատճառով ալ առաքինութեան բարոյագիտութիւնը կը մտնէ յարաբերապաշտութեան (Relativism) մը ծիրէն ներս, որ բարոյագիտութեան ոլորտին մէջ ընդունելի չէ:

Նաեւ արիստոտելեան *միջին* (յուն.՝ mesotês) հասկացութիւնը անորոշ է, նկատի ունենալով որ երկրաչափական կամ թուաբանական հարցի մը առջեւ չենք գտնուիր, որ ճշգրիտ *միջին* մը ունենանք: Իւրաքանչիւր անհատ կրնայ